ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

27 նոյեմբերի 2025 թվականի թիվ 2522-Ա

ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ կառավարության՝ 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ և հիմք ընդունելով քաղ. Հայրապետ Մկրտչյանի դիմումը՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող, Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք, ք. Սևան, Գայի փողոց թիվ 15 հասցեում գտնվող անշարժ գույքի /վկայական՝ N 25112025-05-0041 / համար նոր հասցե տրամադրելու մասին, **որոշում եմ.**

1. Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք, ք. Սևան, Գայի փողոց թիվ 15 հասցեում գտնվող անշարժ գույքի համար տրամադրել Սևան համայնք, ք. Սևան, Գայի փողոց թիվ 16 բնակելի տուն հասցե:
2. Սույն որոշումը հիմք է պետական գրանցում ստանալու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի նոյեմբերի 27
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

27 նոյեմբերի 2025 թվականի թիվ 2523-Ա

ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ՝ 10. 09.2025Թ. N 1861-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝ **որոշում եմ.**

1. Սևան համայնքի ղեկավարի՝ 10.09.2025թ. «Հողատարածքը համայնքային սեփականություն ճանաչելու մասին» N1861-Ա որոշման 1-ին կետը կարդալ նոր խմբագրությամբ՝

1) «Համաձայն ներկայացվող հատակագծի՝ սեփականության իրավունքով Վահե Ազիզյանին պատկանող խանութի զբաղեցրած 0.0102հա մակերեսով հողատարածքը ճանաչել համայնքային սեփականություն, համապատասխանեցնել ՀՀ համայնքների «բնակավայրերի» քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի N 2-6 եզրակացությամբ հաստատված Գեղարքունիք–1 միկրոռեգիոնալ փաստաթղթերի փաթեթում առկա գոտևորման հատակագծին՝ բնակավայրերի՝ նպատակային նշանակության, հասարակական՝ գործառնական նշանակության հողատարածքի՝ տրամադրելով Սևան համայնք, ք. Սևան, ք. Սևան, Ա. Գրիբոյեդովի փողոց թիվ 9 / 1 հողամաս հասցե:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի նոյեմբերի 27
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

27 նոյեմբերի 2025 թվականի թիվ 2524-Ա

ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով, «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 1541 հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ և 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետերով՝ **որոշում եմ.**

1. Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք, ք. Սևան, Կ. Դեմիրճյան փողոց թիվ 10 հասցեում գտնվող, սեփականության իրավունքով «ՍՏԵՄԱՆ» ՍՊԸ-ին պատկանող, գոյություն ունեցող երկհարկանի առևտրի սրահին կից կցակառույցի կառուցման համար շինարարական աշխատանքները սահմանված ժամկետում չավարտելու համար տուգանել չկատարված շինարարական աշխատանքների նախահաշվային արժեքի 3 տոկոսի չափով, այն է՝ 9130 դրամ:
2. «ՍՏԵՄԱՆ» ՍՊԸ-ին՝ 15-օրյա ժամկետում կամավոր հիմունքներով տուգանքը վճարել Սևան համայնքի բյուջեի 900165101123 հաշվեհամարին:
3. Հանձնարարել Սևանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնին՝ «ՍՏԵՄԱՆ» ՍՊԸ-ին պատկանող, գոյություն ունեցող երկհարկանի առևտրի սրահին կից կցակառույցի կառուցման համար աշխատանքներն ավարտին հասցնելու համար գործող քաղաքաշինական նորմերին և պահանջներին համապատասխան «ՍՏԵՄԱՆ» ՍՊԸ-ին տրամադրել նոր շինարարության թույլտվություն կամ երկարաձգել տրված շինթույլտվության գործողության ժամկետը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում առձեռն կամ օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի նոյեմբերի 27
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

27 նոյեմբերի 2025 թվականի թիվ 2525-Ա

ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ՝ 13.11.2025Թ. N 2406-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով՝ **որոշում եմ.**

1. Ուժը կորցրած ճանաչել Սևան համայնքի ղեկավարի՝ 13.11.2025թ. «Անշարժ գույքի գործառական նշանակությունը փոխելու մասին» N 2406-Ա որոշումը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի նոյեմբերի 27
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

27 նոյեմբերի 2025 թվականի թիվ 2526-Ա

ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ՝ 30.10.2025Թ. N 2278-Ա ՈՐՈՇՄԱՆ ՎԵՐՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝**որոշում եմ.**

1. Սևան համայնքի ղեկավարի՝ 30.10.2025թ. «Բնակելի նշանակության շինությունները սեփական գույք ճանաչելու մասին» N2278-Ա որոշման վերնագրում կատարել հետևյալ փոփոխությունը՝

1) «Բնակելի նշանակության շինությունները սեփական գույք ճանաչելու մասին» բառերի փոխարեն կարդալ «Հողամասը սեփական գույք ճանաչելու մասին» բառերը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի նոյեմբերի 27
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

27 նոյեմբերի 2025 թվականի թիվ 2527-Ա

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման և հիմք ընդունելով քաղ. Արամ Սաֆարյանի դիմումը՝ **որոշում եմ.**

1. Արամ Սաֆարյանին տրամադրել շինարարության թույլտվություն Սևան համայնք, գ. Դդմաշեն, 1-ին փողոց, 4-րդ նրբանցք թիվ 1 / 3 հասցեում գտնվող հողատարածքում մեկ հարկանի բնակելի տան կառուցման համար:
2. Արամ Սաֆարյանը շինարարական աշխատանքներն սկսելուց առնվազն երեք օր առաջ պարտավոր է Սևանի համայնքապետարանին և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնին ներկայացնել N 2-5 ձևի տեղեկանք:
3. Արամ Սաֆարյանը պարտավոր է շինարարական աշխատանքներն ավարտելուց հետո՝ բայց ոչ ուշ, քան շինարարության թույլտվության ժամկետը լրանալուց 30 օր առաջ, դիմել Սևան համայնքի ղեկավարին՝ ավարտված շինարարության շահագործումը փաստագրելու համար, հակառակ դեպքում՝ կենթարկվի վարչական պատասխանատվության օրենքով սահմանված կարգով:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի նոյեմբերի 27
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

27 նոյեմբերի 2025 թվականի թիվ 2528-Ա

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման և հիմք ընդունելով քաղ. Հրաչ Սարգսյանի դիմումը՝ **որոշում եմ.**

1. Հրաչ Սարգսյանին տրամադրել շինարարության թույլտվություն Սևան համայնք, գ. Չկալովկա, 2-րդ փողոց թիվ 24 հասցեում գտնվող գոյություն ունեցող անասնաշենքի քանդման և տնտեսական շինության կառուցման համար:
2. Հրաչ Սարգսյանը շինարարական աշխատանքներն սկսելուց առնվազն երեք օր առաջ պարտավոր է Սևանի համայնքապետարանին և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնին ներկայացնել N 2-5 ձևի տեղեկանք:
3. Հրաչ Սարգսյանը պարտավոր է շինարարական աշխատանքներն ավարտելուց հետո՝ բայց ոչ ուշ, քան շինարարության թույլտվության ժամկետը լրանալուց 30 օր առաջ, դիմել Սևան համայնքի ղեկավարին՝ ավարտված շինարարության շահագործումը փաստագրելու համար, հակառակ դեպքում՝ կենթարկվի վարչական պատասխանատվության օրենքով սահմանված կարգով:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի նոյեմբերի 27
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

27 նոյեմբերի 2025 թվականի թիվ 2529-Ա

ՀՈՂԱՄԱՍԻ ԵՐԿՐԱՉԱՓԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԻ, ԳԾԱՅԻՆ ՉԱՓԵՐԻ ՈՒՂՂՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ կառավարության՝ 29. 04. 2021թ. N 698-Ն որոշմամբ, հաշվի առնելով, որ Սևան համայնքի հերթապահ էլ. քարտեզում առկա են անճշտություններ, որի հետևանքով անհրաժեշտություն է առաջացել փոփոխել՝ սեփականության իրավունքով ՋԱԲԵԼ Ա ՎԱՍՍԻԼՅԱՆԻՆ պատկանող, Սևան համայնք, ք. Սևան, Աբովյան փողոց թիվ 9 / 49 հասցեում գտնվող 0.018հա մակերեսով հողամասի /վկայական՝ N 28062016-05-0021/ գծային չափերը, երկրաչափական պատկերը և տեղադիրքը, հիմք ընդունելով որակավորում ունեցող անձի կողմից կատարված չափագրությունների արդյունքները, ՀՀ համայնքների «բնակավայրերի» քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի N2-6 եզրակացությամբ հաստատված Սևան համայնքի Ծաղկունք բնակավայրի գլխավոր հատակագիծը՝ **որոշում եմ.**

1. Ուղղել և հաստատել՝ Սևան համայնք, ք. Սևան, Աբովյան փողոց թիվ 9 / 49 հասցեում գտնվող անշարժ գույքի տեղադիրքը, գծային չափերը և երկրաչափական պատկերը:
2. Սույն որոշումը հիմք է պետական գրանցում ստանալու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի նոյեմբերի 27
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

27 նոյեմբերի 2025 թվականի թիվ 2530-Ա

ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ՝ 30.10.2025Թ. N 2276-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝ **որոշում եմ.**

1. Սևան համայնքի ղեկավարի՝ 30.10.2025թ. «Հողատարածքը ուղղակի վաճառքի կարգով օտարելու մասին» N 2276-Ա որոշման 1-ին կետում կատարել հետևյալ փոփոխությունը՝

1) «վկայական՝ 31072024-05-0015» բառերի փոխարեն կարդալ «վկայական՝ 31072025-05-0015» բառերը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի նոյեմբերի 27
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

27 նոյեմբերի 2025 թվականի թիվ 2531-Ա

ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ՝ 04. 11.2025Թ. N 2322-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝**որոշում եմ.**

1. Սևան համայնքի ղեկավարի՝ 04.11.2025թ. «Բնակելի նշանակության շինությունները սեփական գույք ճանաչելու մասին» N 2322-Ա որոշման 1-ին կետում կատարել հետևյալ փոփոխությունը՝

1) «2139.2քմ մակերեսով» բառերի փոխարեն կարդալ «2130քմ մակերեսով» բառերը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի նոյեմբերի 27
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

27 նոյեմբերի 2025 թվականի թիվ 2532-Ա

ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի, Սևան համայնքի ավագանու՝ 19.11.2024թ N146-Ն որոշման 1-ին կետով սահմանված թիվ 1 հավելվածի 7-րդ կետի ա) և բ) ենթակետերի և հիմք ընդունելով «ՍԵՎԱՆՆԱ » ՍՊԸ -ի կողմից ներկայացված հայտը՝ **որոշում եմ.**

1. «ՍԵՎԱՆՆԱ» ՍՊԸ -ին / գործունեությունը՝ ք. Սևան, Սարգիս Սևանեցի փողոց թիվ 17 /45 հասցե / տրամադրել 01. 08. 2025 - 31. 12. 2025թ ժամանակահատվածի համար՝

1) ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառքի թույլտվություն՝ Սևան համայնքի բյուջեի 900165101354 հաշվեհամարին վճարելով տեղական տուրք՝ 20100 դրամ;
2) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն՝ Սևան համայնքի բյուջեի 900165101339 հաշվեհամարին վճարելով տեղական տուրք՝ 20100 դրամ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում առձեռն կամ օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի նոյեմբերի 27
ք.Սևան